գեալ՝ զեկեղեցւոյ հաւատս հաստատէր, և ձգէր զքարոզութիւն Աւետարանին յաշխարհն Ուտէացւոց, և յԱղուանս և 'ի Լփինս, և ի Կասպս և ի դուռն Հորայ և յայլ ազգի ազգիսն, զոր զերութեամբն էր ածեալ Աղէքսանդրի Մակեդոնացւոյ և նստուցեալ զմեծ լերամբն Կովկասու զԳարդառան և զԿամիճիկ Հեփթաղան դարձուցանիլ ի հաւատս, զկարգ Աստուծապաշտութեան ուսուցանէր, զոր ի վաղնջուց ուսեալն էին և մոռացեալ, և բոլորովին քարոզ և առաքեալ խուժադուժ սարոտանեացն լինելով՝ ըստ նոցին բառբառոյ դպրութեան առնէր զնոսա ծանօթս։ Եւ անտի դարձեալ ի մօրսն երթեալ բնակէր, զօղեալ ի սպառնալեաց զժնդակ իշխանացն։ Եւ անդ յանտառսն ծածկեալ՝ օր ըստ օրէ հաստատէր զեկեղեցիսն Աստուծոյ։ Անդէն ոգի մոլորութեան զրգռէր զմիտս զազանացեալ բռնակալացն՝ զայրագնեալ նոցա և փոյթ կալեալ ի սպանանել զնա։ Իսկ երանելոյն Մաշտոցի ի Հոգւոյն սրբոյ ազդեալ՝ փութացեալ փորէր փոս մի ըստ պիտոյից գործոյն և զԱստուածային առեալ գանձ, որէ Խաչն Ցէրուսեան եղեալ ի տապանի ծածկէր ի գետնափոր կայանին։ Եւ այնուհետև հաւատարիմ և զուգակրօն աշակերտքն միաբան յաղօթս և խնդրուածս ապաւինեալ ի միմեանց կամաւ յերկուս բաժանէին ջոկս, կէսք ի կողմանս դաւառացն ելեալ խորհէին, և կիսոցն բազում աշխարհս հատեալ՝ անցեալ քարոզէին զհաւատս։

Բայց մնացեալ դասն ի տեղւոջ կայանի Խաչին յետ սակաւ ինչ աւուրց զմարտիրոսական առնոյր պսակ, յորոց նահատակութեանց տեղւոջ նշանք լուսեղէնք և հրաշալի սքանչելիք երևեալ, զոր տեսեալ բազում անգամ անհաւատից, և ուսեալ թէ մեծին Աստուծոյ է այն նշան՝ հաւատային միաբան և մըկրտէին առ հասարակ։ Իսկ մի ոմն ի նորահաւատից, որ բազում անգամ տեսեալ էր զնշանն զայն ի վերայ գետնափոր կայանի Խաչին՝ շինէ մատուռն մի հողեղէն չորեք կուսի և տապան տախտակամած արարեալ՝ ամփոփէր զնշխարս նոցա ի տապանի անդ և ամ յամէ ուխտաւորեալ կատարէր զյիշատակս նոցա, և յոլովից լինէր բժշկութիւն ի տեղւոջն, յորս հաստատեալ նուաճեցան հաւատացեալքն։ Եւ նախ անդ եղեալ հիմու-